Կարգապահական գործ թիվ ԿԳ-16062

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 273-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/188-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԵԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Լիպարիտ Սիմոնյանի, Խորհրդի անդամներ՝ Կարեն Մեժլումյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Լուսինե Սահակյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Եգորյանի (արտոնագիր թիվ 1187) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ Աննա Վարդապետյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ հայտնել է որ, http://www.a1plus.am/1439836.html?utm_source=dlvr.it&utm_medium=facebook հղումով հասանելի *«Գասպարին պառկեց գետնին, պաշտպան հեռացավ դահլիճից, դատավորը վիրավորվեց»* վերտառությամբ տեսանյութում արձանագրված է, որ նիստերի դահլիճը լքելուց հետո Վարդգես Գասպարիի պաշտպան Տիգրան Եգորյանը լրագրողների հետ զրույցում Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նելլի Բաղդասարյանի վերաբերյալ հետևյալ արտահայտությունն է անում.*«Սա առհասարակ իրավաբանի պահվածք չի, սա ինչ-որ մի, ես չգիտեմ, սանձարձակ, քմահաճ և ոչ մի կերպ, ասենք, օրենքին ու իրավունքին չառնչվող մի կնոջ պահվածք է, որը չի կարող կոչվել և տեղ չունի դատական համակարգում»:*

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 11.04.2016թ. թիվ 114-Ա/ԿԳ-16062 որոշմամբ փաստաբան Տիգրան Եգորյանի (արտոնագիր թիվ 1187) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված Փաստաբանի

վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

15.04.2016թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Սամվել Միրզոյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը 04.05.2016թ. ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ http://www.a1plus.am/1439836.html?utm_source=dlvr.it&utm_medium=facebook հղումով հասանելի *«Գասպարին պառկեց գետնին, պաշտպան հեռացավ դահլիճից, դատավորը վիրավորվեց»* վերտառությամբ տեսանյութից և դրանում առկա Վարդգես Գասպարիի պաշտպան Տիգրան Եգորյանի արտահայտության տեսագրությունից բացի այլ տեղեկության ՀՀ դատական դեպարտամենտը չի տիրապետում: Դիմողը կից ներկայացրել է վերը նշված տեսանյութը պարունակող լազերային սկավառակ:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Նախապատրաստող անձ Սամվել Միրզոյանը 15.06.2016թ. ներկայացրել դիմում, որտեղ նշել է, որ փաստաբան Տիգրան Եգորյանի կողմից էլեկտրոնային փոստով ներկայացվել է բացատրություն՝ առանց ստորագրության: Նախապատրաստող անձը միաժամանակ նշել է, որ հեռախոսային խոսակցության ժամանակ խոստացել է Պալատ ներկայացնել նույն բացատրությունն՝ իր կողմից ստորագրված: Կարգապահական գործում առկա է «Բացատրություն» վերնագրով Սամվել Մարտիրոսյանին ուղղված, առանց ստորագրության, 15 էջից բաղկացած նյութ:

16.06.2016թ. Պատասխանողը Պալատ է մուտքագրել գրավոր, ստորագրված բացատրություն ուղղված նախապատրաստող Սամվել Միրզոյանին, թվագրված 31.05.2016թ.: Պատասխանողը բացատրությունում մասնավորապես նշել է, որ Նելլի Բաղդասարյանի մասնագիտական և անձնական հատկանիշների վերաբերյալ այժմ էլ մնում է նույն կարծիքին, ավելին, նրա անձնական հատկանիշների և դրանով պայմանավորված պաշտոնին անհամատեղելիության կապակցությամբ հանդես է եկել համապատասխան միջնորդությամբ վերջինիս նկատմամբ դատահոգեբանական ստուգում իրականացնելու վերաբերյալ՝ հաշվի առնելով նրա վարքագիծը թիվ ԵՇԴ/0125/01/14 գործով և կարծում է, որ Նելլի Բաղդասարյանին հոգեբանական թեստի ենթարկելու անհրաժեշտությունն ավելի քան ակտուալ է հատկապես հաշվի առնելով այն, որ նա դատավորի թեկնածու է դարձել և պաշտոնում է նշանակվել առանց այդպիսի ստուգում անցնելու: Պատասխանողը նշել է նաև հարցազրույցով արտահայտած կարծիքի փաստական հիմքերը, մասնավորապես նկարագրել է թիվ ԵՇԴ/0125/01/14 գործի դատական նիստերի ընթացքում դատավորի դրսևորած վարքագիծը:

Պատասխանողը նշել է, որ իր կողմից նկարագրված դատական նիստում տեղի ունեցած բոլոր փաստական հանգամանքները հիմք են տալիս ողջամտորեն կասկածի տակ դնելու Ն. Բաղդասարյանի անկողմնակալությունն ու անաչառությունը, ինչպես նաև ձեռնհասությունը, դատավորի բարձր պաշտոնում աշխատելու հնարավորությունը

և թույլատրելիությունը: Ըստ Պատասխանողի ստեղծվել է իրավիճակ, որում պաշտպանական կողմի, և առավել ևս ամբաստանյալի նկատմամբ կիրառվում են իրավունքի սահմանափակումներ, սանկցիաներ և խափանման միջոցներ, որոնք կարծես ինքնանպատակ են և նախագահողի քմահաճույքի արդյունք՝ անկախ նրանից օրենքով նախատեսված են թե ոչ, որոնց մասին նույնիսկ չի տեղեկացվում Դատարանի կողմից, պաշտպանական կողմին չեն արամադրվում իրավունքներին առնչվող որոշումները, չեն պարզաբանվում կիրառված սահմանափակումների, սանկցիաների իրավական և փաստական հիմքերը, դրանք համաչափ չեն և չեն հետապնդում իրավաչափ նպատակ: Պատասխանողը նշել է նաև, որ Նելլի Բաղդասարյանի գործողությունները, մասնավորապես՝ մեկ բերման ենթարկելու միջոցով, և նույնիսկ խափանման միջոց կիրառելով դատական նիստերին Վ. Գասպարիի ներկայությունը ապահովելու պատճառաբանությունը, մեկ նրան այդ դատական նիստերին մասնակցելու հնարավորությունից զրկելը՝ վերջինիս հեռացնելու միջոցով, խոսում են այն մասին, որ Ն.Բաղդասարյանը այլևս չէր կողմնորոշվում ինչպես վարել թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով ընթացող դատաքննությունը, նա լավագույն դեպքում ուղղակի խճճվել է, սակայն իրենք կարծում են իրականում փորձում էր իր անձի գերակայությունը հաստատել բոլորի նկատմամբ և այդ նպատակին հասնելու հարցում չէր խորշում միջոցի ընտրության հարցում՝ անտեսելով օրենքի խախտման և լիազորությունների անցման հարցերը: Երկու դեպքում էլ, ըստ Պատասխանողի ակնհայտ է, որ Ն.Բաղդասարյանը չի կարող աշխատել դատավորի պաշտոնում:

Պատասխանողը հայտնել է, որ որքան էլ խնդրո առարկա հարցազրույցով կատարված արտահայտությունները դատավորի կամ Աննա Վարդապետյանի աշխարհընկալման տեսանկյունից վիրավորական լինեն, այդպիսի կարծիք այտահայտելու համար ինքն ունեցել է բավարար հիմքեր՝ հաշվի առնելով դատավոր Նելլի Բաղդասարյանի այդ օրվա նիստի ընթացքում, ինչպես նաև այդ նիստին նախորդող օրերի (նիստերի) ընթացքում դրսևորած վարքագիծը: Միևնույն ժամանակ, Պատասխանողը հայտնել է, որ վերոնկարագրյալ իրադարձությունների արդյունքում իրենց մոտ և, ըստ իրենց, նաև այս ամենի ականատեսների գերակշիռ մեծամասնության մոտ, իսկապես կասկածներ են առաջացել Ն. Բաղդասարյանի հոգեկան առողջության կապակցությամբ և միգուցե նա իսկապես կարիք ունի մասնագիտական օգնության կամ առնվազն տևական հանգստի: Պատասխանողը նշել է, որ այս եզրակացությունը հիմնված է իր կողմի նկարագրված հակասական, փոփոխական, անհավասարակշիռ, կոնֆլիկտային, նյարդային և հիստերիկ գնահատվող տարբեր դրսևորումների վրա, ինչը ոչ մի կերպ վիրավորական չպետք է գնահատվի, քանի որ ողջամիտ կասկած է մարդու առողջական վիճակին վերաբերող, հակառակը դրանից վիրավորվելն է լրացուցիչ կասկածներ հարուցում:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք իր կարծիքի հրապարակային արտահայտումը կարող է հանգեցնել փաստաբանի կարգապահական պատասխանատվության, ապա Պատասխանողը կարծում է, որ ոչ այն պարզ պատճառով, որ այդ հարաբերությունները գտնվում են ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումների շրջանակներում և դրանցով սահմանված սահմանափակումները չեն կարող գերազանցվել:

Խորհրդի նիստում Պատասխանողը պնդել է գրավոր բացատրությունում նշված

հանգամանքները և հայտնել, որ այն բոլոր արտահայտությունները, որ կատարվել են և արձանագրվել են տեսանյությում դրանք կատարվել են դատական նիստերի դահլիճից դուրս, ոչ դատական քննության ընթացում, իր կարծիքով հանդիսացել են այն հրապարակային կյանքի բաղադրիչ, որտեղ կիրառել են սահմ սահմանված իրավունքների և դրանց սահմանափակումների վերաբերյալ իրավական կառուցակարգերը, և Կանոնագրքի շրջանակներում չպետք է դիտարկվի և քննարկվի: Կատարված արտահայտությունները չեն հանդիսանում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք, և եթե դրանք համադրվեն այն կետերի հետ, որոնցով հարուցվել է կարգապահական վարույթ, ապա՝ իր կողմից կատարված խիստ քննադական արտահայտությունները, որոնք բխել են դատավոր Նելլի Բաղդասարյանի ոչ իրավական և քրեական դատավարության կանոնակարգումներից դուրս գործողությունների և պահվածքի վերաբերյալ իր կարծիքով լրիվ տեղավորվում են այն խիստ և սթափ գնահատականների տիրույթում, որոնք ոչ մի կերպ կասկածի տակ չեն դնում փաստաբանի հեղինակությունը, ազնվությունը, անձեռնմխելիությունը, ընդհակառակը ինքը դատավորի անձեռնմխելիության հարցն է բարձրացրել դատական նիստերի դահլիճից դուրս և դատական նիստից դուրս, բարձրացրել է նրա կողմից դատական իշխանության հեղինակության անկմանը նպաստող վարքագծի դրսևորման հարցը և դրա անթույլատրելիությունը և այդպիսի վարքագիծը դատական համակարգի կողմից սանձահարելու անհրաժեշտությունը, մասնավորապես այդպիսի դատավորին դատական համակարգից դուրս հանելու, հեռացնելու, ավելին դա այնպես անելու, որ հասարակության բոլոր անդամների համար ակնհայտ և հասկանալի լինի, որ այդպիսի մարդը տեղ չունի դատական համակարգում: Իր համոզմամբ այդ արտահայտությունները և բնութագրիչները, որոնք ինքը տվել է, փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը չեն հակասում: Պատասխանողը նշել է, որ մի փաստաբան մի խայտառակ դատական նիստի արդյունքում, որտեղ նախագահող դատավորը նույնիսկ լավ էլ չի պատկերացրել, թե քրեական դատավարության կանոնակարգումները ինչպես պետք է կյանքի կոչի, որ ապահովի քրեական դատավարության մասնակցող անձանց իրավունքները քննադատել է այդ դատական նիստը նախագահող դատավորին և ինքը չի համարում, որ դա կարող էր հանգեցնել կամ հանգեցրել է փաստաբանի կոչման նկատմամբ հարգանքի ձևավորման և ամրապնդման սկզբունքների նպատակների խախտմանը, ընդհակառակը, ինքը կարծում է, որ հասարակությունը ցանկանում է լսել ավելի ազնիվ, ոչ այնքան այսպես ասած իրավական նկարագիրը այս կամ այն գործողությունները թույլ տվող պաշտոնյայի, կլինի դա դատավոր, դատախազ, քննիչ, թե որևէ այլ քաղ ծառայող, որոնց բոլորի հետ փաստաբանն իր մասնագիտական գործունեության ընթացքում շփվում է:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

15.06.2016թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որում նշել է, որ Տիգրան Եգորյանը չի հերքել լրագրողների հետ զրույցի ժամանակ իր կողմից վերը նշված արտահայտությունների կատարումը և իր

բացատրությամբ մանրամասնել և հետևողական ներկայացրել է վերը նշված արտահայտությունների կատարման պատճառները: Ըստ նախապատարաստողի փաստաբան Տիգրան Եգորյանի բացատրություններում ներկայացված բազմաբնույթ պատճառաբանություններն ավելի շուտ ՀՀ արդարադատության խորհրդին ուղղված և վերաբերելի հիմնավորումներ են դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ սկսելուն, քան պատճառաբանություններ իր կողմից Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերով սահմանված պահանջների կատարմանն ու խախտմանն ուղղված հիմնավորումներ:

Նախապատրաստողը փաստել է, որ Դիմումատուի կողմից ներկայացված արտահայտությունները առկա են և կատարված են փաստաբան Տիգրան Եգորյանի կողմից:

20.06.2016թ.գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի նոյեմբերի 23-ին, ժամը՝ 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ էական փաստը՝

- 09.03.2016թ. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքում Տիգրան Եգորյանը լրագրողների հետ զրույցում Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նելլի Բաղդասարյանի վերաբերյալ հետևյալ արտահայտությունն է կատարում. *«Սա առհասարակ իրավաբանի պահվածք չի, սա ինչ-որ մի, ես չգիտեմ, սանձարձակ, քմահաճ և ոչ մի կերպ, ասենք, օրենքին ու իրավունքին չառնչվող մի կնոջ պահվածք է, որը չի կարող կոչվել և տեղ չունի դատական համակարգում»*:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի ներկայացրած դիմումով, http://www.a1plus.am/1439836.html?utm_source=dlvr.it&utm_medium=facebook հղումով հասանելի «Գասպարին պառկեց գետնին, պաշտպան հեռացավ դահլիճից, դատավորը վիրավորվեց» վերտառությամբ տեսանյութով (Տես՝ 00:58 րոպեից մինչև 1:20 րոպե), ինչպես նաև Պատասխանողի բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 23.11.2016թ. տրամադրված N ԸԴՂ/ԿԳ/1125-16 տեղեկանքի համաձայն Տիգրան Եգորյանը արտոնագիրը ստացել է 15.10.2011թ.: Տիգրան Եգորյանի նկատմամբ 2011-2016թթ ժամանակահատվածում ութ կարգապահական վարույթով կայացվել են որոշումներ՝

- Խորհրդի 04.02.2013թ. թիվ 4-ԿԳ որոշմամբ Տիգրան Եգորյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (Կանոնագրքի 2.3.3. և 6.1.1 ենթակետերի հատկանիշներով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ նկատողություն, որը մարվել է.
- Խորհրդի 06.06.2013թ. թիվ 24-ԿԳ որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ Կանոնագրքի 2.3.3. և 6.1.1 ենթակետերի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է.
- Խորհրդի 03.03.2016թ. թիվ ԿԳ/46-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է.
- Խորհրդի 03.10.2016թ. թիվ ԿԳ/107-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1 ենթակետի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:
- Խորհրդի 31.10.2016թ. թիվ ԿԳ/157-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1 ենթակետի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:
- Խորհրդի 31.10.2016թ. թիվ ԿԳ/158-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1 ենթակետի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:
- Խորհրդի 11.11.2016թ. թիվ ԿԳ/162-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1 ենթակետի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:
- Խորհրդի 14.11.2016թ. թիվ ԿԳ/163-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1 ենթակետի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան փաստաբան Տիգրան Եգորյանի նկատմամբ 2016 թվականի ապրիլի 11-ին հարուցված կարգապահական վարույթի արդյունքում Տիգրան Եգորյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների խախտման համար, իսկ Կանոնագրքի 2.2.2 ենթակետի հիմքով հարուցված գործի վարույթը ենթակա է կարճման ներքոհիշյալ պատճառաբանությամբ.

7.1. Կանոնագրքի 2.2.3 ենթակետի մասով.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի* պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ ***մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը***:

Պալատի խորհուրդը անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին՝

- արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում.

-արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները.

-արդյո՞ք փաստաբանի կողմից կարծիքի հրապարակային արտահայտումը գտնվում է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումների շրջանակներում.

-արդյո՞ք փաստաբան Տիգրան Եգորյանը լրագրողների հետ զրույցում Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նելլի Բաղդասարյանի վերաբերյալ *«Սա առհասարակ իրավաբանի պահվածք չի, սա ինչ-որ մի, ես չգիտեմ, սանձարձակ, քմահաճ և ոչ մի կերպ, ասենք, օրենքին ու իրավունքին չառնչվող մի կնոջ պահվածք է, որը չի կարող կոչվել և տեղ չունի դատական համակարգում»* արտահայտությունն անելով նպաստել է փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

7.1.1. Արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում:

Պալատի խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկել, որպես օրենքով նախատեսված սահմանափակում, հետևյալ պատճառաբանությամբ.

Տվյալ դեպքում, նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված փաստաբանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները դիտվում են «**օրենքով նախատեսված** սահմանափակման» համատեքստում, թե՝ ոչ:

KINCSES v. HUNGARY գործով 27.01.2015թ. որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ***դիմողի արտահայտվելու ազատությանը միջամտությունը հիմնված է 1998 թվականի թիվ 11 ակտի[1] 37ա և 38 հոդվածների վրա, հետևաբար՝ նախատեսված է եղել օրենքով***[2]:

Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենքի (թիվ 11 ակտի) 37ա հոդվածի համաձայն՝ *փաստաբանի կողմից կարգապահական խախտումը համարվում է կատարված, եթե նա ..... խախտել է փաստաբանի էթիկայի նորմերով նախատեսված պարտավորությունները*:

Նշված օրենքի 38-րդ հոդվածը խոսում է Հունգարիայի փաստաբանների պալատի կողմից կիրառվող կարգապահական տույժերի տեսակների մասին:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունգարիայի փաստաբանը փաստաբանական պալատի կողմից կարգապահական պատասխանատվության էր

[1] Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենք:

2 Տե՛ս KINCSES v. HUNGARY 27.01.2015 (no. 66232/10, § 27)

ենթարկվել Փաստաբանների էթիկայի կանոնների 12.1 և 15.2 կետերի խախտման համար, ապա **միանշանակ կարելի է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն փաստաբանի արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթները, որոնք սահմանված են փաստաբանների էթիկայի նորմերով, Կոնվենցիայի տեսանկյունից հավասարեցվում են օրենքով նախատեսված սահմանափակումներին:**

Նույն կերպ պետք է ընկալել ՀՀ փաստաբանների պալատի կողմից հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումները, քանի որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և **փաստաբանի վարքագծի կանոնագրքի** պահանջները խախտելու համար.....:*

7.1.2. Արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները, սույն կարգապահական գործով:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել **միայն օրենքով**՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ **այլոց պատվի ու բարի համբավի** և այլ հիմնական իրավունքների և ազատությունների **պաշտպանության նպատակով**:*

Այդպիսի կարգավորում ունի նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ *այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, **որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում**՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:*

Կարևոր է պարզել, թե Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո արդյո՞ք փաստաբանի վարքագծի սահմանափակումը եղել է իրավաչափ, թե՝ ոչ:

ա) «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 27-րդ հոդվածի և 39-րդ հոդվածի համաձայն, հաշվի առնելով KINCSES v. HUNGARY գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 27.01.2015թ. որոշմամբ[3] բերված իրավական դիրքորոշումները, Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումները ամբողջությամբ տեղավորվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «***որոնք նախատեսված են օրենքով»*** հասկացության մեջ:

Եվրոպական դատարանի նշված գործով փաստական հանգամանքները նույնական են, այնքանով, որքանով՝ KINCSES v. HUNGARY գործով դիմողը փաստաբան է և վերջինիս պատասխանատվության է ենթարկել փաստաբանական պալատը արտահայտվելու համար՝ փաստաբանի էթիկայի կանոնների խախտման

[3] Տես՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մաս

հիմքով: Հունգարիայի փաստաբանության օրենսդրությունը էթիկայի կանոնների մասով նույնպես վկայակոչող (բլանկետային) է և հղում է կատարում արդեն փաստաբանական պալատի սահմանած էթիկայի կանոններին:

բ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյո՞ք Պալատը փաստաբանի արտահայտվելու ազատությունը Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանափակելով՝ իրավաչափ նպատակ է հետապնդել պաշտպանելու այլ անձանց հեղինակությունը, թե՝ ոչ: Նշվածը պարզելու համար նախ պետք է մեջբերել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը այն է՝ Փաստաբանների պալատի խնդիրներն են՝ *4) վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից ..... փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման ..... նկատմամբ. 5) միջոցներ ձեռնարկել **փաստաբանության** հեղինակության բարձրացման ուղղությամբ*: Փաստաբանության հասկացությունը տրված է նույն օրենքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ *Փաստաբանությունը **փաստաբանների մասնագիտական միավորում է,** որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:*

Նշված իրավական նորմերի վերլուծությունից միանշանակ պարզ է դառնում, որ փաստաբանների պալատի խնդիրներից է բարձր պահել ՀՀ բոլոր փաստաբանների միավորման արդյունքում ձևավորված կառույցի հեղինակությունը, և հետևաբար, Պալատի մարմին հանդիսացող Պալատի խորհրդի կողմից այն փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելը, որը խախտել է Կանոնագրքի համապատասխան պահանջը, դրանով իսկ ազդելով բոլոր փաստաբանների հավաքական միավորում հանդիսացող փաստաբանության հեղինակության վրա:

գ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք ժողովրդավարական հասարակության համար նման միջամտությունն անհրաժեշտ էր և հետևաբար, արդյո՞ք պահպանվել էր այն հավասարակշռությունը մի կողմից փաստաբանության հեղինակության պաշտպանության, և մյուս կողմից անձի արտահայտվելու ազատության սահմանափակման միջև: Այս հարցին անդրադառնալու համար նախ և առաջ անհրաժեշտ է խոսել հասարակությունում փաստաբանության դերի և նշանակության մասին:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ *Փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում: Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումները որպես փաստաբանական միության անդամ*[4]:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն*

[4] Տե՛ս Casado Coca v. Spain գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, 24.02.1994թ. վճիռը (§ 54):

իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ *Մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև* ***Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի[5] կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները****:*

Պալատի կանոնադրության 2.2 կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանների պալատը հետապնդում է նաև հետևյալ նպատակները և խնդիրները՝* ***նպաստել*** *Հայաստանի Հանրապետության լիակատար ինտեգրմանը եվրոպական կառույցներում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցմանը եվրոպական չափանիշներին,* ***եվրոպական իրավական ստանդարտների և ավանդույթների արմատավորմանը****:*

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ *Փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը[6]:*

ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ դատարանը նշել է. *«Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական*

---

[5] Այսուհետ՝ CCBE

[6] Տե՛ս CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession

օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները ***<u>սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը</u>****»:*

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ կշեռքի մի նժարի վրա դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս:

Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության համար:

7.1.3 Արդյո՞ք փաստաբանի կողմից կարծիքի հրապարակային արտահայտումը գտնվում է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումների շրջանակներում.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:*

Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, *եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:*

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար.....*:

Վերը հիշատակված նորմերից հետևում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի կարգավորման առարկան տարբերվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով կարգավորվող առարկայից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը պաշտպանում է անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, իսկ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը պաշտպանում է փաստաբանության, որպես մասնագիտական միավորման հեղինակությունը, անկախությունը և օրինապահությունը:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջի խախտման համար փաստաբանի կողմից պատասխանատվություն կրելը, չի լուծում կարգապահական վարույթով դիմողի մասնավոր շահի պաշտպանության հարցը: Օրինակ, եթե

փաստաբանը պայմանագրով նախատեսված հոնորարի այն մասը, որի համար ծառայություն չի մատուցել, պայմանագիրը լուծելուց հետո չի վերադարձնում վստահորդին, ապա նա խախտում է փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջը, սակայն փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու արդյունքում, նրա վստահորդի մոտ չի ավելանում փաստաբանի կողմից վճարման ենթակա գումարը: Ի վերջո, գումարի վերադարձման համար, վստահորդը պետք է դիմի դատարանին:

Հետևաբար, Պալատի խորհուրդը գտնում է, որ կարող է քննարկել Պատասխանողի արարքը հակասում է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջներին, թե՝ ոչ:

7.1.4 Արդյո՞ք փաստաբան Տիգրան Եգորյանը լրագրողների հետ զրույցում Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նելլի Բաղդասարյանի վերաբերյալ **«Սա առհասարակ իրավաբանի պահվածք չի, սա ինչ-որ մի, ես չգիտեմ, սանձարձակ, քմահաճ և ոչ մի կերպ, ասենք, օրենքին ու իրավունքին չառնչվող մի կնոջ պահվածք է, որը չի կարող կոչվել և տեղ չունի դատական համակարգում»** ***արտահայտությունն անելով նպաստել է փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:***

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանը ունենալով քաղաքացու իրավունքներ, ազատություններ և կրելով քաղաքացու համար նախատեսված պարտականություններ, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով և Կանոնագրքով ենթարկվում է լրացուցիչ սահմանափակումների: Նշված սահմանափակումներն անհրաժեշտ են փաստաբանի, որպես մասնագետի՝ երաշխավորելու անկախությունը, իրավաբանական օգնության որակը, ինչպես նաև հասարակության մեջ բարձրացնելու մասնագիտության հեղինակությունը:

Կանոնագրքի 2.2.3 ենթակետը սահմանում է հետևյալ վարքագծի կանոնը՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը*:

Այս կանոնից հետևում է, որ փաստաբանն իր մասնագիտական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում գործունեությամբ չպետք է դրսևորի այնպիսի վարքագիծ, որը կարող է երրորդ անձանց մոտ փաստաբանի կոչման նկատմամբ հարգանքի բացակայություն (նվազեցում) առաջացնի:

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Եգորյանը լրագրողների հետ զրույցում Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նելլի Բաղդասարյանի վերաբերյալ *«Սա առհասարակ իրավաբանի պահվածք չի, սա ինչ-որ մի, ես չգիտեմ, սանձարձակ, քմահաճ և ոչ մի կերպ, ասենք, օրենքին ու իրավունքին չառնչվող մի կնոջ պահվածք է, որը չի կարող կոչվել և տեղ չունի դատական համակարգում»* արտահայտությունն անելով նպաստել է փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբանը չի կարող իրեն թույլ տալ հրապարակայնորեն նման արտահայտություններ կատարել, այն դեպքում, երբ այդ արտահայտությունները չեզոք անձանց կողմից կարող են ընկալվել, որպես

վիրավորական խոսքեր: Այս արտահայտությունները հարիր չէ փաստաբանին: Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Եգորյանն իրավասու չէր այսպիսի վարքագիծ դրսևորել, և վերջինիս կողմից այսպիսի անհարգալից արտահայտություններ կատարելը դատավորի նկատմամբ արտոնված չէ ոչ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով, և ոչ էլ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով:

7.2. Կարգապահական տույժի ընտրությունը

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ Պալատի խորհուրդը՝ լուծում է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու և կարգապահական տույժնշանակելու հարցը:

Վարույթի կարգի 3-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ *Կարգապահական վարույթ հարուցելու, կարգապահական վարույթն իրականացնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործողություններն իրականացվում են Պալատի առջև՝* ***փաստաբանների հավասարության սկզբունքի հիման վրա:*** Նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ *Փաստաբաններին կարգապահական տույժի ենթարկելիս Պալատի խորհուրդը պարտավոր է ղեկավարվել* ***միատեսակ չափանիշներով***:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ նշված գործառույթը իրականացնելով վերջինս լուծում է ինստիտուցիոնալ կարևորագույն խնդիր՝ ապահովում է փաստաբանների վարքագծի կանոնների միատեսակ կիրառությունը:

Վարքագծի կանոնների կիրառումը պարտադիր և անհրաժեշտ գործոն է, քանզի փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է քաղաքացիական հասարակության ձևավորման և ժողովրդավարության ապահովման համար: Փաստաբանի վրա դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտականություններ, որոնց շարքում հատուկ տեղ է զբաղեցնում փաստաբանի մասնագիտական հեղինակությունը:

Հանդիսանալով հասարակության հատուկ սուբյեկտ՝ փաստաբանը կոչված է ապահովել անձանց իրավունքների պաշտպանությունը, դրանով իսկ լրջագույն դերակատարում ունենալով արդարադատության իրականացման աջակցման գործընթացում:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ*:

Պալատի խորհուրդը հաշվի առնելով Տիգրան Եգորյանի անձը, կարգապահական խախտման հետևանքները, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ, գտնում է, որ Տիգրան Եգորյանի նկատմամբ պետք է կիրառել նկատողություն տույժի տեսակը:

7.3. Կանոնագրքի 2.2.2 ենթակետի մասով.

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա***

հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն):

Այս կանոնի խախտում Պալատի խորհուրդը չի արձանագրում, քանի որ սույն կարգապահական գործով հաստատված փաստերի շրջանակում, փաստաբանի վարքագիծը գտնվում է Կանոնագրքի 2.2.3 կետի կարգավորման տիրույթում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով ««Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, Պալատի խորհրդի 05.06.2016թ. թիվ 16/8 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի նիստերի վարման ներքին ընթացակարգի 8.6-րդ ենթակետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Տիգրան Եգորյանի (արտոնագիր թիվ 1187) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 16062 կարգապահական վարույթը կարճել:

2. Փաստաբան Տիգրան Եգորյանին (արտոնագիր թիվ 1187) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների խախտման համար:

3. Փաստաբան Տիգրան Եգորյանի (արտոնագիր թիվ 1187) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

4. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
Խորհրդի անդամ՝ Նելլի Հարությունյան